

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2018թ. մայիսի 10-ին կայացած արտահերթ նիստի**

Նախագահությամբ՝ ռեկտոր Ա.Լոքյանի

Քարտուղարությամբ՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի

Մասնակցությամբ՝ գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ը ուժը կորցրած ճանաչելու և 2017-2018 ուսումնական տարվա առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտների ամփոփիչ ատեստավորումն անցկացնելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Լսեցին՝ «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ը ուժը կորցրած ճանաչելու և 2017-2018 ուսումնական տարվա առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտների ամփոփիչ ատեստավորումն անցկացնելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը նշեց, որ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրամանի 2-րդ կետի համաձայն ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 1997թ. մարտի 3-ի N 13-ՔՆ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1197-Ն հրամանը:

2016թ. հուլիսին գիտական խորհրդի նիստով (արձանագրություն N 141) 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական պլանները հաստատվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2012 թ. մարտի 28-ի N 59-Ա հրամանով հաստատված ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի 2-րդ կետի համաձայն, որում որպես տվյալ կարգի իրավական հիմք՝ նշվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանը, որը, ինչպես նշվեց՝ ուժը կորցրած է ճանաչվել:

Համաձայն հաստատված ուսումնական պլանների՝ 2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը ներառում է՝ ամփոփիչ քննություն և մագիստրոսական թեզի պաշտպանություն: Սակայն համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետի՝ ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է, որն իրականացվում է մագիստրոսական թեզի պաշտպանության միջոցով:

Հիմք ընդունելով վերը նշված հրամանի պահանջները և հաշվի առնելով առկա ուսուցման 2-րդ կուրսի 1622 թողարկման մագիստրանտների դիմումը, զեկուցողն առաջարկեց՝

1. Ուժը կորցրած ճանաչել «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ը:

2. 2017-2018 ուսումնական տարվա առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտների ամփոփիչ ատեստավորումն անցկացնել միայն մագիստրոսական թեզերի պաշտպանության միջոցով:

3. Ակադեմիայի գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 14-ի նիստում (արձանագրություն №141) հաստատված ուսումնական պլաններում (առկա և հեռակա ուսուցման ձև) կատարել համապատասխան փոփոխություն՝ ամփոփիչ քննությանը հատկացված 7 (յոթը) կրեդիտը գումարել մագիստրոսական թեզի կրեդիտներին:

4. Ակադեմիայի գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 14-ի նիստում (արձանագրություն №141) հաստատված առկա ուսուցման ձևով սովորողների 2-րդ կուրսի (1622 թողարկում) 2017-2018 ուսումնական տարվա ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի 2-րդ կիսամյակի 12-րդ կետում կատարել փոփոխություն՝ ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության համար հատկացված 04.05.2018-25.05.2018թ-ի փոխարեն մագիստրոսական թեզի պաշտպանությունը կազմակերպել 25.05.2018-20.06.2018թ-ը ընկած ժամանակահատվածում:

5. Նախորդ տարիներին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն և մագիստրոսական թեզ) չանցած շրջանավարտները վերահանձնում են ամփոփիչ ատեստավորման այն մասը, որից ունեն պարտք:

Արտահայտվեցին՝ Խ.Բեգիրջյանը, Գ.Չատինյանը, Լ.Զիլֆուղարյանը:

Որոշեցին՝

1. Ուժը կորցրած ճանաչել «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ը:

2. 2017-2018 ուսումնական տարվա առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտների ամփոփիչ ատեստավորումն անցկացնել միայն մագիստրոսական թեզերի պաշտպանության միջոցով:

3. Ակադեմիայի գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 14-ի նիստում (արձանագրություն №141) հաստատված ուսումնական պլաններում (առկա և հեռակա ուսուցման ձև) կատարել համապատասխան փոփոխություն՝ ամփոփիչ քննությանը հատկացված 7 (յոթը) կրեդիտը գումարել մագիստրոսական թեզի կրեդիտներին:

4. Ակադեմիայի գիտական խորհրդի 2016թ. հուլիսի 14-ի նիստում (արձանագրություն №141) հաստատված առկա ուսուցման ձևով սովորողների 2-րդ կուրսի (1622 թողարկում) 2017-2018 ուսումնական տարվա ուսուցման գործընթացի կազմակերպման ժամանակացույցի 2-րդ կիսամյակի 12-րդ կետում կատարել փոփոխություն՝ ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության համար հատկացված 04.05.2018-25.05.2018թ-ի փոխարեն մագիստրոսական թեզի պաշտպանությունը կազմակերպել 25.05.2018-20.06.2018թ-ը ընկած ժամանակահատվածում:

5. Նախորդ տարիներին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ամփոփիչ ատեստավորումը (ամփոփիչ քննություն և մագիստրոսական թեզ) չանցած շրջանավարտները վերահանձնում են ամփոփիչ ատեստավորման այն մասը, որից ունեն պարտք:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոբյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

10 մայիսի 2018թ.

Կ.Տ.